ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՑՈՒՄ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆԸ

ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ
արվեստ. թեկնածու
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
Երևանի պետական համալսարան
yvettetaj@yahoo.com

ՀՏԴ՝ 77.0; 77.04
DOI: 10.54503/1829-4278.2025.1-180

Ամփոփագիր

Լուսանկարչությունը, ստեղծման օրից ի վեր ներթափանցելով և ամուր արմատներ գցելով հայ մշակույթի մեջ, դարձել է արվեստի՝ իրականությունն ամրագրող և հավերժացնող ինքնատիպ մի ճյուղ՝ առ այսօր իր մասնակցությունն ունենալով և աջակցելով գիտական ոլորտներին:

Ժամանակի ընթացքում կատարելագործվելով և իր ուրույն տեղը գտնելով՝ այսօր լուսանկարչությունը դարձել է մեր առօրյա կյանքի անբաժան մասնիկը, ժամանակի նյութական արժեքներն ու մշակույթը գրանցող և հավերժացնող արվեստի ճյուղը:

Լուսանկարը կարող է լինել ոչ միայն կերպարի կամ առարկայի, այլև երևույթի պատկերումը: Այն, ֆիզիկական մարմնավորում ստանալով, տպագրված լինելով թղթի վրա, առարկայական և շոշափելի է դարձնում մեր պատկերացումները:

Բանալի բառեր. լուսանկար, վավերագրական լուսանկարչություն, հայկական լուսանկարչություն, հայագիտություն

Լուսանկարչության ծագման համառոտ պատմություն

Տեսանելի իրականությունը արտատպելու, պահպանելու խնդիրները հնուց ի վեր հետաքրքրել են մարդկությանը: 19-րդ դարի սկզբին տարբեր երկրների գիտնականների ուսումնասիրությունները հանգեցրին մի մեծ հայտնագործության, որն էլ ստացավ «լուսանկարչություն» անվանումը: Լուսանկարչությունը մարդկությանը տրա-

մաղրեց կատարված իրադարձության փաստացի արձանագրման հնարավորությունը, որը կարելի է նաև լայնորեն տարածել: Այն միշտ հավակնում է լինել իրականության յուրահատուկ կողմերի արտացոլողը և միևնույն ժամանակ երբեք չի ընկալվում որպես լիիրավ իրականություն:

Լուսանկարիչն արձանագրում է այն ակնթարթը, որը մենք ամեն օր տեսնում ու որի կողքով երբեմն անտարբեր անցնում ենք: Բացի այդ՝ նա լուսանկարի միջոցով անցյալի պատկերները մոտեցնում է ներկային: Արվեստի այս ճյուղի առանձնահատկությունն այն է, որ այն տալիս է փաստագրական նշանակության կերպարվեստ, իսկ փաստագրությունը լուսանկարի «ոսկյա երաշխիքն է»[1]:

Նոր ծնունդ առած լուսանկարչությունը զարգանում էր արդիության դարաշրջանի մշակութային պահանջներին համահունչ: Լուսանկարները նոր հասարակարգերի ձեռքին դառնում էին զորեղ գործիքներ՝ օգնելով առաջընթացի գաղափարներով տարված մարդկանց և հասարակություններին՝ ձևավորելու աշխարհի հանդեպ նոր հայացք[2]:

Լուսանկարչությունն առաջինն էր նոր արվեստներից, որը, ի տարբերություն նախորդող գեղարվեստական պրակտիկաների, գիտական և տեխնիկական ծագում ունի[3]: Վիզուալ արվեստների շարքում այն ձեռք բերեց իր առանձնահատուկ դերը, սակայն մինչ այդ լուսանկարչությունը անխուսափելիորեն պիտի համեմատվեր և ստորադասվեր գեղանկարչությանը: «Լուսանկարին հետևել է և շարունակում է հետևել գեղանկարչության ուրվականը»[4]: Յուրաքանչյուր նորաստեղծ գյուտ իր զարգացման սկզբնական շրջանում գտնվում է ավանդական արվեստային պրակտիկայի ազդեցության ոլորտում: Օրինակ՝ հայ գրատպության զարգացման սկզբնական շրջանում Հակոբ Մեղապարտը ձեռագիր տառերի նմանությամբ տպագրատառեր էր պատվիրում[5]: Նույնպես և լուսանկարչության դեպքում. լուսանկարիչները փորձում էին հնարավորինս գեղանկարչական դարձնել իրենց ստեղծագործությունները: Հայտնի է, որ առաջին կալոտիպերի շաղվածությունը, կոնտրաստային լինելը լուսանկարչության հիմնադիր-

---

1 **Բորև Յ.,** *Գեղագիտություն* (ռուս. թարգմ.՝ Մ. Տ. Խոցանյանը), Երևան, «Հայաստան» հրատ., 1982, էջ 377–378:

2 **Բուդումյան Կ., Գրիգորյան Վ.,** *Լուսանկարչության հարցեր: Տեսություն և տեխնիկա*, Երևան, «Ակտուալ արվեստ» հրատ., 2017, էջ 13:

3 **Левашов В.,** *Фотовек. Очень краткая история фотографии за последние 100 лет*, Москва: «ИП Гусев», 2016, с. 5.

4 **Барт Р.**, *Camera lucida*, Москва: Изд. «Ad Marginem», 1997, с. 17.

5 «Հակոբ Մեղապարտը գիտակցում էր, որ հայ հասարակությունը կարող էր վատ ընդունել տպագիր գիրքը կամ կարող էր նույնսիկ մերժել, քանի որ հայերը վաղուց ի վեր սովոր էին ձեռագիր գրքին»: Տե՛ս **Իշխանյան Ռ.**, *Հակոբ Մեղապարտ*, «Անտարես» հրատ., 2012, էջ 13:

ներից մեկը՝ անգլիացի Վիլյամ Հենրի Ֆոքս Թալբոթը[6], անվանում էր «ռեմբրանդտյան էֆեկտ»[7]: Արդեն սկզբնական շրջանից երևում է լուսանկարիչների ձգտումը՝ «բարձրացնելու» լուսանկարը, օժտելու այն արվեստին բնորոշ հատկանիշներով:

Վավերագրական և գեղարվեստական լուսանկարչության փոխհարաբերությունները

Ոմանք լուսանկարչությունը համարում էին դարի կարևորագույն հայտնագործություններից մեկը, որը կխթաներ թե՛ գիտության, թե՛ արվեստի զարգացումը: Մյուսները պնդում էին հակառակը՝ գտնելով, որ այն ամեն կերպ խոչընդոտելու է մասնավորապես գեղանկարիչների ստեղծագործական աշխատանքը: Ձեռնպահ մնալով միանշանակ գնահատական տալուց՝ լուսանկարչությունն ու գեղանկարչությունն արվեստում զուգահեռ ուղիներով էին զարգանում: Այնուամենայնիվ, վավերագրական լուսանկարչության հիմքում ընկած է տարաբնույթ տեղեկությունը, իսկ գեղարվեստական լուսանկարչության հիմքում տեղեկությունը ստեղծագործաբար ներկայացնելն է:

Խոսելով փաստավավերագրական և գեղարվեստական լուսանկարչության մասին՝ պետք է նշել, որ այս երկու հասկացությունները պայմանականորեն հաջորդել են միմյանց և տարբեր մոտեցումներ են ունեցել լուսանկարի ստեղծման հարցի և այն ընկալելու վերաբերյալ: Փաստավավերագրական լուսանկարչության գլխավոր նպատակը իրականությունը ներկայացնելն էր՝ առանց որևէ միջամտության վավերացնելով պատկերող անձի տվյալները, այսպիսով ձգտելով ճշգրիտ և իրատեսական մոտեցմամբ ներկայացնել իրադարձությունները: Ի հակադրություն վերջինիս՝ գեղարվեստական լուսանկարչությունը արվեստի մի ձև է, որտեղ արդեն արվեստագետը օգտագործում է իր ստեղծագործական մտահղացումները, մոտեցումները՝ արտահայտելու ոչ միայն իր գաղափարները, այլև զգացմունքներն ու ընկալումները:

19-րդ դարում լայնորեն տարածված էր այն կարծիքը, որ արվեստ կարող են համարվել միայն ձեռակերտ ստեղծագործությունները, հետևաբար լուսանկարչությունը, որում օգտագործում էին մի շարք ֆիզիկաքիմիական միջոցներ, չէին կարող հավակնել համարվել արվես-

[6] 19-րդ դարի սկզբին տարբեր երկրների գիտնականներ սկսեցին նպատակասլաց կերպով ուսումնասիրել լուսանկարչության բնագավառը: Լավագույն արդյունքին հասան ֆրանսիացի Ժոզեֆ Նիսեֆոր Նյեպսը (1765–1833 թթ.), Ժակ Լուի Մանդե Դագերը (1787–1851 թթ.) և անգլիացի Վիլյամ Հենրի Ֆոքս Թալբոթը (1800–1877 թթ.): Հենց նրանց է պատկանում լուսանկարչության բացահայտման փառքը: Թալբոթի գործունեության մասին ավելին տե՛ս **Newhall B.**, *The History of Photography from 1839 to the Present Day*, New York: The Museum of Modern Art, 1964, p. 9–12.

[7] **Левашов В.**, *Лекции по истории фотографии,* Москва: «Treemedia», 2012, с. 19.

տի տեսակ: Արվեստի տեսաբաններն ու քննադատները լուսանկարը դիտարկում էին որպես իրականության մեխանիկական արտացոլում, որը կարող էր գոյություն ունենալ միայն որպես գեղանկարչության պատճեն: Նրանք լուսանկարը համարում էին պատմությունը վավերագրող փաստաթուղթ: Այդ մոտեցումը ժամանակի ընթացքում դարձավ լուսանկարչության՝ փաստավավերագրական տեսակի առանձնացման հիմքը:

Վավերագրական լուսանկարչության նշանավոր ներկայացուցիչ Գարի Վինոգրանդն ասում էր. «Լուսանկարը հավասարազոր չէ նրան, ինչ պատկերված է, նրա հիմքում կա մեկ այլ բան: Ամբողջ հարցը փոխակերպման մեջ է, հենց դա է լուսանկարի ողջ հմայքը»[8]:

Վավերագրական լուսանկարչությունից գեղարվեստական լուսանկարչության անցման սահմանագիծը

Ակնհայտ է, որ լուսանկարչության հայտնագործումից հետո՝ սկզբնական շրջանում, լուսանկարչության գործառույթը միմիայն փաստերը, երևույթները, անձանց և իրադարձությունները վավերագրելն էր: Առանձին օրինակներով պարզ դարձավ, որ և՛ հայ, և՛ այլազգի հայտնի գեղանկարիչների համար լուսանկարչությունը ծառայել է որպես գործընթացն արագացնելու, հորինվածքը ճշգրտորեն ստանալու և, ի վերջո, ստեղծագործական ճկունության հասնելու միջոց:

Վավերագրող լուսանկարիչների համար խնդիրը հստակ էր. կա՛մ նրանք առաջարկ էին ստանում գիտնականներից և պահանջ հովանավորներից՝ նկարելու այս կամ այն առարկան կա՛մ առհասարակ վավերագրում էին իրենց հետաքրքրող ցանկացած թեմայով: Միևնույն ժամանակ արվեստի գնահատողներն ու քննադատները իրարամերժ կարծիքներ էին հայտնում լուսանկարի վերաբերյալ: Ոմանք կարծում էին, որ այն տեխնիկական արհեստ է, որով կարող է զբաղվել յուրաքանչյուրը, և այն արվեստի գործ համարելը միանշանակ անմտություն է: Նրանք լուսանկարը համարում էին իրականության մեխանիկական կրկնօրինակում: Սակայն ի հայտ եկան արվեստի մարդիկ, որոնք ըստ արժանվույն գնահատեցին լուսանկարչությունը՝ արվեստի տարբեր ճյուղերի կողքին այն դնելով մի հարթության վրա:

Ժամանակի ընթացքում քայլ առ քայլ վավերագրող որոշ լուսանկարիչների ստեղծագործական մոտեցումները փոխվեցին՝ մոտենալով գեղարվեստական լուսանկարչությանը: Պետք է նաև նշել, որ գեղարվեստական լուսանկարչության զարգացումն անմիջականորեն կապված է եղել գեղանկարչության հետ:

---

[8] **Pinero. F.**, *The Street Photography through the lens of Garry Winogrand and Vivian Maier*, Université Toulouse–Jean Jaurès, 2015–2016, p. 11.

Վավերագրական լուսանկարչությունից գեղարվեստական լուսանկարչության անցման սահմանագիծը շատ նուրբ է. հիմքում ընկած են գեղանկարչության սկզբունքները: Գեղարվեստական լուսանկար է համարվում այն աշխատանքը, որում լուսանկարիչն առանձնակի ուշադրություն է դարձրել լուսանկարների հորինվածքին, հեռանկարին, գունային, տոնային, գծային մոդելավորմանը, անձանց լուսանկարելիս՝ նրանց դիրքին, կեցվածքին, լույս ու ստվերին՝ մեկտեղելով լուսանկարչական սարքի տեխնիկական հնարավորությունները:

Տեսողական արվեստների շարքում այն ձեռք բերեց իր ինքնատիպությունը, սակայն մինչ այդ լուսանկարչությունը համեմատվում էր գեղանկարչության հետ և ստորադասվում դրան:

Լուսանկարիչները, կրկնելով և ամենայն մանրամասնությամբ ընդօրինակելով հանրահայտ գեղանկարիչների՝ արդեն իսկ ձևավորած և ընդունած ավանդույթները, որդեգրում էին գեղարվեստական լուսանկար ստանալու ուղին: Այսպիսով, լուսանկարն սկսեց յուրացնել գեղանկարի ժանրերը (դիմանկար, բնանկար, նատյուրմորտ, կենցաղային և անիմալիստական ժանր, թեմատիկ պատկեր) ու հնարքները: Լուսանկարիչները հիմնականում լուսանկարում էին կոթողային, անշարժ օբյեկտներ: Նրանք կարող էին հետևել նաև որոշակի ուղղությունների:

Լուսանկարը գծերի և լուսաստվերի համադրությունից ստեղծված արվեստ է, որը ավելի ճշգրտորեն է պատկերում այս կամ այն առարկայի ձևը: Անկասկած, լուսանկարը շատ օգտակար միջոց է գեղանկարչության համար, երբեմն այն գեղարվեստական նշանակություն է ստանում փորձառու և ընդունակ մարդկանց ձեռքերում, բայց, այնուամենայնիվ, այն չի հավակնում լինել գեղանկարչության հետ միևնույն հարթության վրա[9]:

Եթե անգամ լուսանկարիչն այս ասպարեզում գիտակ լիներ, այնուամենայնիվ, բոլոր լուսանկարիչների դեպքում առանցքային կարևորություն է տրվել հոգեբանական գործոնին: Ժամանակին մեկ լուսանկարը մոտ 40–45 րոպե նախապատրաստական աշխատանք էր պահանջում, և այդքան սպասելը հոգնեցուցիչ էր: Լուսանկարիչը պետք է տարբեր հնարքներով, զրույցներով կոտրեր իր ու լուսանկարվողի միջև եղած պատնեշը և ստեղծեր անկաշկանդ, ազատ միջավայր: Դա է պատճառը, որ նույն ժամանակահատվածում նույն տեխնիկան կիրառած մի լուսանկարչի նկարներում մարդիկ շատ ուրախ, բնական, հանգիստ դեմքով են, իսկ մեկ ուրիշ լուսանկարչի նկարներում՝ վախի, անորոշության, հոգնածության կամ զայրույթի արտահայտությամբ (նկ. 1): Ուսումնասիրությունների հիման վրա կա-

[9] **Нильсон В.**, *Изобразительное построение фильма*, Москва: Кинофотоиздат, 1936, с. 136.

րող ենք ասել, որ այդ առումով մեր ավագ սերնդի հայ լուսանկարիչնե-ի շարքում վարպետաց վարպետը եղել է Անթուան խան Սկրուգինը[10]: Որպես օրինակ կարող ենք հիշատակել դերվիշներին նկարելու գործ-ընթացը: Նրանց համոզելը շատ բարդ էր, հատկապես քրիստոնյայի համար, քանի որ դերվիշները շատ մեծ դժվարությամբ էին շփվում, ապրում էին ասկետիկ կյանքով, երբեմն՝ մեկուսացած: Դա է պատ-ճառը, որ նրանց ստուդիա բերելը՝ այն ժամանակ այդ «անհայտ աշ-խարհ» մտցնելը աշխատատար էր: Խնդրի բարդ կողմը նրանց շուր-ջը կոմպոզիցիա դասավորելն էր, այսինքն՝ հոգեբանական ազատ ու անկաշկանդ միջավայր ստեղծելը, որը վկայում էր լուսանկարչի մեծ վարպետության մասին (նկ. 2):

Հոգեբանական այս կարևոր երևույթը հետագայում որդեգրել են նաև այլ լուսանկարիչներ: Օրինակ՝ հայազգի ամենահայտնի լուսանկարիչ-ներից Յուսուֆ Քարշը (Հովսեփ Քարշյան)[11], որ ստեղծագործել է 20-րդ դարում Եվրոպայում, իր աշխատություններից մեկում ամեն լուսանկա-րի կողքին գրել է այն զրույցը, երկխոսությունը, հարց ու պատասխանը, որոնք նախորդել են օրինակ՝ Հեմինգուեյի, Էյնշտեյնի (նկ. 3) կամ Չեր-չիլի նկարներին:

Եզրակացություն

Երկար տարիներ են պահանջվել, մինչ լուսանկարը գտել է իր տեղն ու դերը կյանքի բոլոր ոլորտներում, և այժմ անհնար է պատկերացնել որևէ բնագավառ առանց լուսանկարչության: Որպես եզրակացություն, կարող ենք արձանագրել, որ գեղարվեստական լուսանկարում ավե-լի մեծ կարևորություն ունի տրամադրությունը, կոմպոզիցիան, լույսը և ստվերը, դիտակետը և այն տարրերը, որոնք ստեղծվում և կյանքի են կոչվում, երբ հեղինակ-լուսանկարիչը ունի ստեղծագործական ու-նակություններ և տեխնիկային տիրապետելու գիտելիքներ՝ այդպիսով ապահովելով վավերագրական լուսանկարչությունից գեղարվեստա-կան լուսանկարչություն անցումը:

Գեղարվեստական լուսանկարչության կայացման և զարգացման գործում նշանակալի և կարևոր դեր են ունեցել նաև լուսանկարչա-կան սարքավորումների կատարելագործումն ու լուսանկար ստանա-լու համար պահանջվող ժամանակը վայրկյանների հասցնելու ձեռք-բերումը:

[10] **Թաջարյան Ի.,** *Լուսանկարների ընտրանի Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուներից*, Երևան, «Զանգակ» հրատ., 2023, էջ 34:

[11] **Քոչար Վ.**, *Հայ լուսանկարիչներ,* Երևան, Հեղինակային հրատ., 2007, էջ 394:

THE TRANSITION FROM DOCUMENTARY TO ARTISTIC PHOTOGRAPHY

YVETTE TAJARIAN
PhD in Art History
Matenadaran after Mesrop Mashtots
Yerevan State University

Abstract

Since its emergence, photography has deeply rooted itself in Armenian culture, evolving into a unique art form that records and preserves reality while supporting scientific fields. Over time, it has become an integral part of daily life, capturing and eternalizing the material and cultural values of different eras. A photograph can depict not only images or objects but also abstract phenomena, giving physical form to our perceptions. Today, photography is inseparable from nearly all spheres of life, from art to science. In artistic photography, elements such as mood, composition, light and shadow, and the photographer's perspective play a crucial role. The transition from documentary to artistic photography has been made possible by the photographer's creative vision and technical expertise. Technological advancements, especially reducing the time needed to capture an image to mere seconds, have also played a key role in the development of photography as a mature and multifaceted art form.

Keywords: Photograph, photo album, Armenian photography, Armenian studies

ПЕРЕХОД ОТ ДОКУМЕНТАЛЬНОЙ К ХУДОЖЕСТВЕННОЙ ФОТОГРАФИИ

ИВЕТ ТАДЖАРЯН

канд. искусствоведения
Матенадаран имени Месропа Маштоца
Ереванский государственный университет

Аннотация

С момента своего появления фотография прочно укоренилась в армянской культуре, превратившись в особенный вид искусства, который фиксирует и увековечивает реальность, а также тесно соприкасается с научными сферами. Со временем фотография стала неотъемлемой частью повседневной жизни, документируя материальные и культурные ценности разных эпох. Данный вид искусства может воспроизводить не только объекты и образы, но и явления, придавая осязаемую форму нашим представлениям. Сегодня фотография проникает во все сферы жизни — от искусства до науки. В художественной фотографии важнейшее значение приобретают настроение, композиция, свет и тень, ракурс и творческий подход автора. Переход от документальной к художественной фотографии стал возможен благодаря развитию креативности и технических знаний фотографов. Существенную роль сыграли и технологические достижения, позволившие сократить время съемки до секунды. Все это способствовало превращению фотографии в самостоятельную и многогранную область искусства.

Ключевые слова: фото, фотоальбом, армянская фотография, художественная фотография, арменоведение

Գրականության ցանկ

1. **Բորև Յ.**, *Գեղագիտություն* (ռուս. թարգմ.՝ Մ. Տ. Խոցանյանը), Երևան, «Հայաստան» հրատ., 1982:
2. **Բուդումյան Կ., Գրիգորյան Վ.**, *Լուսանկարչության հարցեր: Տեսություն և տեխնիկա*, Երևան, «Ակտուալ արվեստ» հրատ., 2017:
3. **Թաջարյան Ի.**, *Լուսանկարների ընտրանի Մաշտոցի անվան Մատենադարանի հավաքածուներից*, Երևան, «Զանգակ» հրատ., 2023:
4. **Իշխանյան Ռ.**, *Հակոբ Մեղապարտ*, Երևան, «Անտարես» հրատ., 2012:
5. **Քոչար Վ.**, *Հայ լուսանկարիչներ*, Երևան, Հեղինակային հրատ., 2007:
6. **Newhall B.**, *The History of Photography from 1839 to the Present Day*, New York: The Museum of Modern Art, 1964.
7. **Pinero. F.**, *The Street Photography through the lens of Garry Winogrand and Vivian Maier*, Université Toulouse– Jean Jaurès, 2015–2016.
8. **Барт Р.**, *Camera lucida*, Москва, Изд. «Ad Marginem», 1997.
9. **Левашов В.**, *Лекции по истории фотографии*, Москва: «Treemedia», 2012.
10. **Левашов В.**, Фотовек. Очень краткая история фотографии за последние 100 лет, Москва: «ИП Гусев», 2016.
11. **Нильсон В.**, *Изобразительное построение фильма,* Москва: Кинофотоиздат, 1936.

Նկարների ցանկ

1. Գիժ Զոհրապ և գիժ Գաբո, լուսանկար, լուսանկարիչ՝ անհայտ, Երևան, 1892 թ., Մատենադարանի արխիվ, Անհատական արխիվային ֆոնդ, թղթ. 40, վավ. 87:
2. Դերվիշի դիմանկարը, լուսանկար, լուսանկարիչ՝ Անթուան Սևրուգին:
3. Էյնշտեյնի դիմանկարը, լուսանկար, լուսանկարիչ՝ Յուսուֆ Քարշ (Հովսեփ Քարշյան):

Ընդունվել է՝ 17.06.2025
Գրախոսվել է՝ 05.07.2025
Հանձնվել է տպ.՝ 11.09.2025

1

2



3